Վարդենիս

Մակերես՝ 14.22կմ^2

Բնակչություն՝ 604

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից 3 կմ հարավ-արեւելք: Մարզկենտրոնից գտնվում է 33 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գյուլիջա, Գյուլլուջա, Վարդաշեն, Վարդենի, Քյուլլուճե անվանումները: Գյուղի շրջակայքում կառուցված է ս. Աստվածածին եկեղեցին (19-դար), Յոթվերք մատուռը: Ղեվոնդ Ալիշանը գյուղի Գյուլիջա տարբերակի հետ նույնացրել է Կիրակոս Գանձակեցու հիշատակած Վարդենիս (13-րդ դար) եւ Զաքարիա Քանաքեռցու՝ Վարդաբլուր գյուղերը:

Գյուղը տեղադրված է Քասախ գետի աջակողմյան վտակ Վարդենիսի հովտում, որտեղից էլ առաջացել է գյուղի անվանումը: տնվում է ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Բնակչության նախնիների մի մասը գաղթել է 1828-29թթ. Արեւմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բայազետի, Մուշի, Վանի եւ Պարսկահայաստանի Խոյ գավառներից: 1831թ.-ին ունեցել է 248, 1897թ.-ին՝ 1068, 1939թ.-ին՝ 1347, 1959թ.-ին՝ 706, 1979թ.-ին՝ 562, 1989թ.-ին՝ 673 հայ բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 685 մարդ, որից 44% տղամարդիկ են, 56%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 44%, աշխատունակները՝ 40%, հետաշխատունակները՝ 16%:

Գյուղն ունի 214 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է:

Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 45%, որոնց մեջ մեծ է արոտավայրերի տեսակարար կշիռը՝ 300հա, վարելահողերըզբաղեցնում են 50հա:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: